«Երևանի Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Հաստատում եմ
Տնօրեն

Ստուգված է
Տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով՝

«Ուրախ անգլերեն»

Խմբակի ծրագիր

2023-2024 ուստարի

«Երևանի Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

«Ուրախ անգլերեն»

Խմբակի ծրագիր

(շաբաթական՝ 2, տարեկան՝ 64)

«Ուրախ անգլերեն» խմբակը նախատեսված է երկրորդ դասարանի սովորողների համար: Խմբակում ընդգրկված սովորողները խաղերի, պաստառների, խմբային աշխատանքների և երգերի միջոցով կծանոթանան անգլերեն լեզվին և կզարգացնեն իրենց բանավոր խոսքը, ինչը կօգնի իրենց հաղթահարել երրորդ դասարանում այն որպես երկրորդ օտար լեզու ուսումնասիրելու ընթացքում դժվարությունները հաղթահարելու հետ կապված հոգեբանական և ակադեմիական խնդիրները: Երրորդ դասարանում սովորողներն արդեն ծանոթ կլինեն լեզվին, կհաղթահարեն տառուսուցման, գրության և հրահանգներ հասկանալու հետ կապված ստրեսը:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների և հմտությունների զարգացման վրա:

Խմբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով, որը կազմված է հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը
2. Նպատակները
3. Վերջնարդյունքները
4. Բովանդակությունը
5. Առաջարկվող գործունեության ձևերը

Ծրագրում առանձնացված են հետևյալ թեմաները՝

1. Ծանոթություն
2. Իմ դասասենյակը
3. Իմ ընտանիքը
4. Իմ արտաքինը
5. Խաղալիքներ
6. Իմ տունը
7. Ազարակում
8. Փոխադրամիջոցներ
9. Առողջ սնունդ

10. Հազուստ

ԹԵՄԱ 1
Ծանոթություն (2 ժամ)
Հիմնական նպատակը
• Ներմուծել ներկայանալու կարևորության գաղափարը • Զարգացնել համապատասխան բառապաշար • Ձևավորել ներկայանալու կապակցված կարճ խոսք
Վերջնարդյունքներ
Թեմայի ավարտին սովորողը կկարողանա՝ • Օգտագործել թեմային առնչվող բառապաշար • Ներկայանալ պարզ կառույցներով • Լսել և հասկանալ ընկերոջ պարզ խոսքը (տեսանյութ, ձայնագրություն) • Պարզ արտահայտություններով վարել կարճ երկխոսություն
Բովանդակություն
Ծանոթություն (2 ժամ)
Առաջարկվող գործունեության ձևեր
• Դերախաղ • Խմբային աշխատանք • Լսողական վարժություններ

ԹԵՄԱ 2

Իմ դասասենյակը (8 ժամ)
Հիմնական նպատակը
• Սովորեցնել համապատասխան բառեր, բառակապակցություններ, արտահայտություններ • Ծանոթացնել դասարանում տրվող հրահանգներին • Զարգացնել պարզ արտահայտություններ, նախադասություններ կիրառելու հմտություն • Ձևավորել հոգատար վերաբերմունք դասասենյակի և դասարանի նկատմամբ • Ձևավորել վարքականոնի պահպանման կարևորության գիտակցում
Վերջնարդյունքներ
Թեմայի ավարտին սովորողը կկարողանա՝ • Կիրառել թեմային առնչվող բառապաշարը • Կիրառել քաղաքակիրթ շփման վարքականոնները • Լսել և հասկանալ դասարանում կիրառվող խոսքը (տեսանյութ, ձայնագրություն և այլն) • Տալ պարզ հարցեր և պատասխանել նմանատիպ հարցերին • Պարզ արտահայտություններով վարել շատ կարճ երկխոսություն, • Նկարագրել դասարանը՝ գործածելով համապատասխան բառապաշարը • Խնամքով օգտագործել սեփական իրերն ու դասասենյակը
Բովանդակություն
• Իմ դասարանը (3ժ) • Իմ նստարանը, գրչատուփը (3ժ) • Հրահանգներ (2ժ)
Առաջարկվող գործունեության ձևեր
• Պաստառներ • Դերախաղ, երգ • Լսողական վարժություններ

ԹԵՄԱ 3
Իմ ընտանիքը (8 ժամ)

Հիմնական նպատակը
• Ներմուծել ընտանիքի կարևորության գաղափարը • Սովորեցնել թեմային բնորոշ բառեր ու արտահայտություններ • Զարգացնել թեմային բնորոշ պարզ արտահայտություններ կիրառելու հմտություն • Ձևավորել հոգատար վերաբերմունք և հարգանք ընտանիքի անդամների նկատմամբ
Վերջնարդյունքներ
Թեմայի ավարտին սովորողը կկարողանա՝ • Օգագործել թեմային առնչվող բառապաշար և կազմել պարզ նախադասություններ • Նկարագրել իր ընտանիքը և իր վերաբերմունքն ընտանիկի նկատմամբ • Պարզ արտահայտություններով վարել կարճ երկխոսություն իր ընտանիքի մասին • Լսել, դիտել և հասկանալ պարզ տեսանյութ և ձայնագրություն թեմայի վերաբերյալ • Դրսևորել հգատար վերաբերմունք ընտանիքի անդամների նկատմամբ
Բովանդակություն
• Իմ ընտանիքը (2ժ) • Իմ տատիկն ու պապիկը (3ժ) • Երեկոներն իմ ընտանիքում (3ժ)
Առաջարկվող գործունեության ձևեր
• Պաստառ • Դերախաղ • Լսողական վարժություն • Ներկայացում • Մուլտֆիլմի դիտում

ԹԵՄԱ 4
Իմ արտաքինը (8 ժամ)

Հիմնական նպատակը
• Ճանաչել դեմքի մասերն անգլերենով • Ընդլայնել թեմային առնչվող բառապաշարը • Զարգացնել բանավոր խոսք թեմայի շրջանակում
Վերջնարդյունքներ
Թեմայի ավարտին սովորողը կկարողանա՝ • Օգտագործել թեմային առնչվող բառապաշար և կազմել պարզ նախադասություններ • Լսել և կատարել հրահանգներ՝ ցույց տալով դեմքի մասերը • Պարզ նախադասություններով նկարագրել իրեն և իր ընկերոջը • Պատասխանել թեմայի վերաբերյալ հարցերին • Ծավալել երկխոսություն՝ օգտագործելով թեմայի բառապաշարը
Բովանդակություն
• Իմ արտաքինը (2ժ) • Ինչպիսի՞ն է իմ ընկերը (2ժ) • Ես նման եմ մայրիկի՞ս, թե հայրիկիս (2ժ) • Համեմատականներ (2ժ)
Առաջարկվող գործունեության ձևեր
• Դերախաղ • Քարտեր, երգ • Լսողական և տեսողական վարժություններ • Գտնել նմանություններ և տարբերություններ

ԹԵՄԱ 5
Իմ խաղալիքները (8 ժամ)
Հիմնական նպատակը

- Ներկայացնել խաղերի բազմազանության և կարևորության գաղափարը
- Ընդլայնել թեմային առնչվող բառապաշարը
- Զարգացնել բանավոր խոսքը թեմայի շրջանակում
- Արտահայտել սեփական վերաբերմունքը խաղալիքների նկատմամբ
- Հետաքրքրվել ընկերոջ խաղալիքներով
- Կարճ նախադասություններով նկարագրել սեփական խաղալիքները
- Զնակերպել ճիշտ խոսք խաղալիք խնդրելու նպատակով

Վերջնարդյունքներ

Թեմայի ավարտին սովորողը կկարողանա՝

- Օգտագործել թեմային առնչվող բառապաշար և կազմել պարզ նախադասություններ
- Կատարել հրահանգներ և պատասխանել համապատասխան հարցերի
- Պարզ նախադասություններով նկարագրել իր և ընկերոջ խաղալիքները
- Ծավալել երկխոսություն՝ օգտագործելով թեմայի բառապաշարը

Բովանդակություն

- Իմ խաղալիքները (2ժ)
- Բակային խաղեր (2ժ)
- Սեղանի խաղեր (2ժ)
- Սպորտաձևեր (2ժ)

Առաջարկվող գործունեության ձևեր

- Դերախաղ
- Քարտեր, երգ
- Լսողական և տեսողական վարժություններ
- Պաստառ
- Մուլտֆիլմի դիտում

ԹԵՄԱ 6

Իմ տունը (8 ժամ)

Հիմնական նպատակը
• Ներմուծել բնակավայրի, տան կարևորության հիմանական գաղափարը • Ծանոթացնել թեմային բնորոշ բառերին, արտահայտություններին • Ընդլայնել թեմային առնչվող բառապաշարը • Զարգացնել բանավոր խոսքը թեմայի շրջանակում • Կարճ նախադասություններով նկարագրել տունը, քաղաքը
Վերջնարդյունքներ
Թեմայի ավարտին սովորողը կկարողանա՝ • Օգտագործել թեմային առնչվող բառապաշար և կազմել պարզ նախադասություններ • Նկարագրել տան բոլոր սենյակները, հատկապես՝ իր սենյակը • Պատասխանել թեմայի վերաբերյալ հարցերին • Ծավալել երկխոսություն՝ օգտագործելով թեմայի բառապաշարը
Բովանդակություն
• Իմ տունը (2ժ) • Իմ ննջարանը (2ժ) • Մեր խոհանոցը (2ժ) • Մեր հյուրասենյակը (2ժ)
Առաջարկվող գործունեության ձևեր
• Դերախաղ • Քարտեր, երգ • Լսողական և տեսողական վարժություններ • Պաստառ և ներկայացում • Զույգերով աշխատանք՝ համեմատել ննջասենյակները

ԹԵՄԱ 7
Ազարակում (8 ժամ)
Հիմնական նպատակը

- Ներմուծել կենդանական աշխարհի բազմազանության գաղափարը
- Ընդլայնել ընտանի և վայրի կենդանիներին առնչվող բառապաշարը
- Զարգացնել բանավոր խոսքը թեմայի շրջանակում
- Ներկայացնել ընտանի և վայրի կենդանիների առանձնահատկությունները, նմանություններն ու տարբերությունները (արտաքին, սնունդ)
- Ձևավորել հոգատար վերաբերմունք կենդանիների նկատմամբ

Վերջնարդյունքներ

Թեմայի ավարտին սովորողը կկարողանա՝

- Օգտագործել թեմային առնչվող բառապաշար և կազմել պարզ նախադասություններ
- Տարբերել ընտանի և վայրի կեդանիները
- Պարզ նախադասությունների միջոցով նկարագրել կենդանիներին և պատասխանել հարցերին
- Ծավալել երկխոսություն՝ օգտագործելով թեմայի բառապաշարը

Բովանդակություն

- Ագարակում (2ժ)
- Ընտանի կենդանիներ (2ժ)
- Վայրի կենդանիներ (2ժ)
- Իմ սիրած կենդանին (2ժ)

Առաջարկվող գործունեության ձևեր

- Դերախաղ
- Քարտեր, երգ
- Լսողական և տեսողական վարժություններ
- Նկարչություն, աշխատանք գունավոր թղթերի հետ

ԹԵՄԱ 8

Փոխադրամիջոցներ (8 ժամ)

Հիմնական նպատակը

- Ներմուծել փոխադրամիջոցների գաղափարը
- Ծանոթացնել երթևեկության կանոններին
- Ընդլայնել բառապաշար թեմայի վերաբերյալ
- Զարգացնել բանավոր խոսքը թեմայի շրջանակում
- Ձևավորել հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ

Վերջնարդյունքներ

Թեմայի ավարտին սովորողը կկարողանա՝

- Օգտագործել թեմային առնչվող բառապաշար և կազմել պարզ նախադասություններ
- Ճանաչել և պահպանել երթևեկության պարզ կանոնները
- Լսել և հասկանալ երթևեկության վերաբերյալ պարզ հրահանգներն ու ցուցումները
- Պատասխանել թեմայի վերաբերյալ հարցերին՝ ծավալել երկխոսություն

Բովանդակություն

- Փոխադրամիջոցներ (4ժ)
- Երթևեկության կանոններ (4ժ)

Առաջարկվող գործունեության ձևեր

- Դերախաղ
- Քարտեր, երգ
- Լսողական և տեսողական վարժություններ
- Խմբային աշխատանք
- Պաստառ

ԹԵՄԱ 9

Առողջ սնունդ (4 ժամ)

Հիմնական նպատակը

- Ներմուծել սննդի բազմազանության և առողջ սննդի գաղափարը
- Ընդլայնել թեմային առնչվող բառապաշարը
- Ձևավորել ճիշտ վերաբերմունք առողջ ապրելակերպի նկատմամբ

- Զարգացնել բանավոր խոսքը թեմայի շրջանակում

Վերջնարդյունքներ

Թեմայի ավարտին սովորողը կկարողանա՝

- Օգտագործել թեմային առնչվող բառապաշար և կազմել պարզ նախադասություններ
- Տարբերել առողջ և անառողջ սննդի տեսակները
- Լսել և հասկանալ այս թեմայով պարզ տեքստեր
- Պարզ նախադասությունների միջոցով նկարագրել օրվա սննդակարգը
- Պատասխանել թեմայի վերաբերյալ հարցերին՝ ծավալելով երկխոսություն

Բովանդակություն

- Իմ սննդակարգը (2ժ)
- Առողջ սնունդ (2ժ)

Առաջարկվող գործունեության ձևեր

- Դերախաղ
- Քարտեր, երգ
- Լսողական և տեսողական վարժություններ
- Խմբային աշխատանք՝ կազմել սննդակարգ և համեմատել

ԹԵՄԱ 10

Հագուստ (2 ժամ)

Հիմնական նպատակը

- Ներմուծել հագուստի ճիշտ կիրառման գաղափար և ձևավորել ճաշակ
- Ընդլայնել թեմային առնչվող բառապաշարը
- Զարգացնել բանավոր խոսքը թեմայի շրջանակում
- Ձևավորել մաքրասիրություն և կոկիկություն

Վերջնարդյունքներ

Թեմայի ավարտին սովորողը կկարողանա՝

- Օգտագործել թեմային առնչվող բառապաշար և կազմել պարզ նախադասություններ
- Տարբերակել հագուստի տեսակները
- Լսել և հասկանալ այս թեմայով պարզ տեքստեր
- Պարզ նախադասություններով նկարագրել իր հագուստը և պատասխանել հարցերին
- Ծավալել երկխոսություն՝ օգտագործելով թեմայի բառապաշարը

Բովանդակություն

- Իմ զգեստապահարանը (1ժ)
- Դպրոցական համազգեստ (1ժ)

Առաջարկվող գործունեության ձևեր

- Դերախաղ
- Քարտեր, երգ
- Լսողական և տեսողական վարժություններ
- Խմբային աշխատանք
- Նկարչություն